

Այս չորս զլխաւոր կէտերուն սրբազործութենէն վերջն է որ Լոյսի նախարարը հրովարտակով մը հրաւէր պիտի կարգայ Արեւելքի եւ Արեւմուտքի հայերենագէտներուն, որ հայկական կաճառ մը կազմուի, որուն ջանքը պիտի ըլլայ երկու լեզուներուն ցորեանն ու որովք զատել իրարմէ, օտարամուտ խորթութիւններէն ոմանք արմատաքի տակակոտոր կարճովին բրել նետել, ուրիշներ յղկել՝ կամ խլուարել, բիժ՝ բիժ՝ ապտ՝ խաղտ սրբել, պարզել, մարզել եւ լեզուն իր գեղեցկութեան մէջ փայլատակեցուցանել, եւ ապա աշխատիլ երկուքին ի մի ձուլման՝ առանց տոնանելու իւրաքանչիւրին ինքնուրոյն պերճութեանց. զի Լուսաւորութեան նախարարը իրազգած խելամուտ է որ այդ գործը նախարարի գործ չէ՝ թէն Լոյսի մակղիրն ունենայ իր շալակը...

Յուսանք աւ այժմ որ նախարարին վերեւ գծած լուսեղէն կանոնները իրենց ղիւրաթափանց հասազայթներով խափուցանին մտքերու խաւարը եւ ամէն ոք սկսի հետեւել անոնց, հաստատ համուզուելով որ հայրենասիրական մեծ գործ մը կատարած պիտի ըլլայ:

Հ. Ա. ՂԱՆԿԵԱՆ

Յ. Գ. Մեր սոյն յօդուածն արդէն շատոնց գրուած շարուած ու մէկ մասը տպուած իսկ էր, երբ ստացայ «Ճակատամարտ»ի 1065 թիւը, ուր կը խօսուէր Հայ կառավարութեան հրատարակած հրամանագրի մասին, որու պաշտօնն է եղեր կանոնաւորել հայ լեզուի ուղղագրութիւնը: «Ճակատամարտ» նմոյշներ ալ ունի այդ ջնաշխարհիկ ուղղագրութենէն: Այլ խօսինք յաջորդով. — Դարձեալ մեր երջանիկ Հայր Վարդանը տոմսակ մը նորիւրու բարեհաճութիւնն ունեցեր է «Բազմավէպ»ի մէջ մեր հրատարակած «Բազմավէպ» մէկ դասախօսութեան մասին, տոմսակ՝ զոր իբր կատակ գրուած ըլլալ կարծեցի, բայց Պ. Թէքէեանի եւս այդ դասախօսութեան մասին գրած յօդուածէն կը հասկնամ որ լուրջ է եղեր:

Թէ՛ Պ. Թէքէեանի եւ թէ՛ գերբըջանիկ Հայր Վարդանի յօդուածներուն մեծ հաճոյքով պիտի պատասխանեմ.

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Շ Ա Պ Ո Ւ Է Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ի Ո Յ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Զ

(տ. ք. էջ միտին 1921)

Մեր հին մատենագիրները առհասարակ կրօնաւոր եղած են և անոնց գրական լեզուն միշտ զբարբարը եղած է՝ իբրև եկեղեցական լեզու: Միակ անձը՝ որ այս երկու կողմերով բացառութիւն կը կազմէ, Շապուհ Բագրատունին է: Ասիկա՝ Աջոտ Ապիհիւլպատի որդին էր, հետևաբար իշխանական ծագումէ, և շնորհունց կրօնական կոչումը. գրեց Բագրատունաց սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց փոխանակ ժամանակի սովորութեամբ գրաբար գրելու, ձեռք առաւ այն ատենուան ժողովրդական բարբառը: Իր գիրքը հասած չէ մեզի, բայց իր մասին տեղեկութիւն կու տան ժամանակակից և յաջորդ պատմագիրները, զլխաւորապէս Յովհ. Կաթ. Պատմաբան (այսպէս են Յովհ. Կիս. Ե. և զուրիս Ի՛ի, Ի՛ի, Ի՛թ, Ասողիկ Բ. Գ. Ուխտ. Ա. հե. Մխիթ. Անեցի եւ Կիրակոս էջ 3, 44):

Նորերս ձեռք է ինկեր վանի և Մուշի կողմերէն բերուած անպիտան ձեռագիր մը, որ շատ պակասաւոր ըլլալով՝ ո՛չ խորագրեր ունի և ո՛չ յիշատակարան: Զեւագրեր շատ յետին է, Ժէ-ԺԺ դարերու գրչութիւն և զրիչն ալ այնքան տգէտ ու ողորմելի, որ մինչև անգամ բնօր գրելու փոխարէն գնար կը գրէ:

Առաջին անգամ ձեռագրիս քննութեան ձեռք է վարկեր Միւրան (Գալուստ Տէր-Մուկրէտեան), այժմ հանգուցեալ, և ինչպէս կ'ըսուի, վերապահութեամբ յայտնոր է իր մօտիկներուն թէ՛ սոյն պակասաւոր և անխորագիր ձեռագիրը Շապուհ Բագրատունուն պատմութիւնն է: Հասկանալի է թէ բանասէրներուն համար ինչպիսի՛ հրեւոնանք պիտի ներշնչէր այս գիւտը. մենք ահա ձեռքի տակ պիտի ունենայինք ո՛չ թէ լոկ նոր պատմագիր մը, այլ թ. դարու աշխարհիկ լեզուն...:

Այս նկատումներով ահա « Էջմիածնի գիտական ինստիտուտը » (կանառ) հրատարակութեան կու տայ սոյն ձեռագիրը՝ աշխատութեամբ Մեսրոպ եպիսկոպոսի, որմէ դրուած է նաև 34 էջ յառաջարան մը (Էջմիածին 1921):

Այս յառաջարանը ուսումնասիրութիւն մ'է Շապուհի անձին և գործին նկատմամբ. Մեսրոպ եպիսկոպոս կ'աշխատի սպացուցանել՝ որ յիշեալ անխորագիր ձեռագիրը Շապուհի գործն է: Դժբախտաբար Միսրան այս մասին ոչինչ չունի. և իր դատողութիւններն ու փաստերը՝ որով, ինչպէս կ'ըսուի, հասեր է այդ եզրակացութեան՝ մեզ ի սպառ անձանթ պիտի մնան:

Մեսրոպ եպիսկոպոս ի մի հաւաքած է այն բոլոր տեղեկութիւնները՝ որ տրուած են Շապուհի և իր գործի մասին՝ զանազան պատմագիրներու կողմէ: Այս տեղեկութիւնները կարելի է ամփոփել հետեւեալ ձևով. Շապուհ գրեր է Բագրատունեաց թագաւորութեան սկզբնատրութեան պատմութիւնը, մանրամասն Աշոտ Ա-ի պատմութիւնը և Սմբատ Ա-ի գործերը. իր գրածը ժամանակի աշխարհաբարով է:

Սակայն ներկայ ձեռագրին նիւթն է նախ Հացունեաց Խաչին պատմութիւնը և յետոյ Վասպուրականի քանի մը իշխաններու պատմութիւնը, այսպէս՝ Դերէն, Տանատ, Աշոտ, միւս Դերէն և Գուրգէն Արծրունի: Աշոտ կամ Սմբատ Բագրատունի թագաւորներու մասին առանձնապէս առնելով՝ խօսուած է շատ հարեանցի կերպով և կամ միայն այն պարագային, երբ Արծրունիները դէպքին խառն են: Այսպէս՝ երբ Բագրատի Մահմէտ խալիֆան կ'արշաւէ Այրարատ և կը գրաւէ Դուին քաղաքը, ասոր կը տրուի 2 տող, իսկ երբ անկէ կ'արշաւէ Վասպուրական, կը տրուի մէկ երես (էջ 50), Քանի մը էջ յետոյ (էջ 55) Տանատ Արծրունին ամբողջ Հայաստանի տէր, նոյն իսկ Բագրատունիներու վրայ գերիշխան կ'ըլլայ: Սմբատ Ա. Բագրատունույ մասին կը խօսուի կէս էջ և կը յիշատակուի իր տիրապետութեան

լայն սահմանները, Բայց այս բոլորը անոր համար՝ որ հանգամանօրէն պատմէ Սմբատի ջրլը Հրոնդշի մասին և ասոր ամուսին Դերէն արծրունույն սիրային շահատակութիւնները մահմետական Գուլինար իշխանունիին հետ (51, էջ), Բաւական ընդարձակ կը պատմուի Մուսուլի իշխան Հապիպի արշաւանքը և կոխը Սմբատի հետ, բայց անոր համար որ ամբողջ կոխնեւրուն առանցքը Ապուստոլեան արծրունույն վրան է: Ատրպատականի Խուսեֆ ոստիկանի կոխները՝ որ Սմբատ Ա-ի կեանքին ծանր և դժբախտ դրուագները կը կազմեն՝ կէս էջ տեղ միայն կը բռնեն: Ասոր հակառակ շատ ընդարձակ է Սմբատի և Ալիխազաց Գոտաս թագաւորին կոխներու պատմութիւնը, որովհետև այս կոխներուն մէջ ամէնէն ակնառու դերը Գուրգէն արծրունին կը կատարէ:

Այս բոլորէն կը հետևի որ ներկայ ձեռագիրը Արծրունեաց պատմութիւնն է և ոչ թէ Բագրատունեաց, հետևաբար պէտք է որ ըլլայ Արծրունի գրչէ գործ. չի կրնար ըլլալ Շապուհի աշխատութիւնը, որ Բագրատունի է և Բագրատունեաց պատմութիւնն է գրած: Մեսրոպ եպիսկոպոս այս կէտը արդարացնելու համար կ'ըսէ թէ, ձեռագիրը պակասաւոր է և կորսուած մասերուն մէջ գտնուած ըլլալ կը կարծէ Բագրատունեաց գործերը, Բայց ասոր հակառակ են նոյն իսկ եղածները: Երբ պատմիչը (էջ 65) Սմբատի աշխարհակալութիւնները կէս էջով կը պատմէ և այն ձևով՝ որ նիւթը արդէն սպառած է, այլ ևս զուր է կարծել որ ուրիշ տեղ նորէն սկսած և աւելի ընդարձակ պատմած ըլլայ: Երբ Խուսեֆ ամիրայի մանկութիւնը և անոր յարաբերութիւնները Ալի ամիրայեանի հետ մանրամասն կը պատմէ (չորս էջ) և յետոյ կէս էջ միայն կու տայ Խուսեֆի և Սմբատի կտուին, պէտք չկայ կարծելու որ նորէն ետ կը զանոյ և այլուր աւելի ընդարձակ կը պատմէ նոյն դէպքը:

Վերջին և հիմնական պատճառաբանութիւն մ'ալ լեզուն է: Ձեռագրին լեզուն ոչ միայն գեղըուկ բարբառ չէ, այլ և

նոյն իսկ շատ աւելի զբարար է՝ քան վարդան Պատմիչի լեզուն: Գեղջկութեան նշան պէտք չէ համարել այն մի քանի տառասխալները (քոյր փոխանակ քոյր են), որոնք տգէտ գրչին անշնորհքութեան արդիւնքն են: Մեսրոպ եպիսկոպոս այս կէտն ալ արդարացնելու համար կ'ըսէ թէ Յովհ. կաթողիկոս են. «գեղջկու լեզու» ըսելով՝ հասկցած են ո՛չ թէ բարբառը, այլ պատմելու ո՛չ-դասական, ոչ-հոետորական ձևը, որ իբր թէ գտնուի ձեռագրին կըմէջ: Բայց չեմ կարծիր որ ասիկա ճիշտ ըլլայ: Յովհաննէսի գեղջկայ բառը ամէն հայկաբան ալ «նամիկ լեզու» հասկցած է. ասկէ գատ ձեռագրին պատմութեան ոճը ո՛չ մի բանով չի տարբերիր մեր անկեալ շրջանի հեղինակներու ոճէն:

Ենթադրեալ Շապուհ բազրատունւոյն պատմութեան մէջ կը գտնեմ հետեւեալ նորագիտ բառերը:

1. անվնայ

ՁԱշտ անդրանիկ եղբայրն քո կապեց չարաչար կապանօք, մինչև անգնայ մահ եղև ի ամբոցին Եկանայ (էջ 84):

Աշտի բանտարկութեան մասին խօսուած է նաև էջ 71, բայց մահուան մասին յիշատակութիւն չկայ: Անգնայ բառ մը գոյութիւն չունի. կ'երևայ թէ պէտք է կարդալ անդ նա. (Շապուհի գրիչը շատ անգամ կը գրէ նայ փոխանակ նա). ըստ այսմ կը հասկցուի «մինչև որ հոն անիկա մահ գտաւ՝ Եկան ամբոցին մէջ»:

2. ապիկարիւլ

Արդ՝ եթէ արասցես զինդրուածս իմ, նոյն օրհնութիւն հաստատեսցի ի վերայ քո. ապա թէ յանդգնեսցիս ցասամբ և ապիկարասցես զբանս իմ, ... նկուն արասցէ Տէր Աստուած զքեզ (էջ 27):

Կը նշանակէ «արհամարհել, կարեւորութիւն չտալ, բանի տեղ չդնել»:

3. ապտկայ

Երիվարք զօրացդ խրթնացցեն և մի կարասցեն գնալ զճանապարհօք և աւարտանուլ զոր խնդրեսդ և ապտկաց ամբոխանք (էջ 27):

Ամէն կողմէ անստոյգ է բառս, որովհետև հատուածը պակասատր կ'երևայ, որով և տեղէն դատելով իմաստ մը տալ չենք կրնար. մանաւանդ որ ձեռագրին ալ ընթերցուածը մեզի յայտնի չէ: Բնագրին մէջ հրատարակիչը դրած է ապտկայ, բայց ծանօթութեանց մէջ կը գրէ ապտկայ. ստնցմէ ո՞րն է ուղիղ. վերջապէս բառը ուղղական է, թէ յոգ. սեռ, որով ուղղականը պիտի ըլլար ապտիկ կամ ապտակ ձև մը:

4. արեւանք

Եւ զհետ մտեալ մինչև արևանքն՝ անխնայ կոտորեցին զայլազգիսն (էջ 62):

Ըստ հրատարակչին թերևս կը նշանակէ «արևին մայր մտնելը», իբր կ'զգուած արև + անի բառերէն: Այս մեկնութիւնը հաւանական է, եթէ արևանք տեղի յատուկ անուն չէ: Բարբառներու մէջ նման ձևով բառ մը չկայ:

5. աւանդ

Ունիք զտէրութիւնդ Չարևանդ զաւատի և զաւանդ քաղաքն Հերայ, զզուխդ Պարսից (էջ 67):

Բռնութեամբ առեր զամենայն կողմանս արևմտից, մինչև հասար յաւանդ քաղաքաց ի Պարտաւ (էջ 72):

Տեղէն կ'երևայ որ կը նշանակէ «զուխ, մեծ քաղաք, chef-lieu». այլուստ անծանօթ է:

6. բանդար

Եւ նա կոչեաց զբանդար, որ կարդացած էր ի դուռն նորա, զտեսուչ զօրացն Պարսից և ասէ. «Ա՛ս զայս երկու մա-

նուկա և հովուեան՝ զնոսա որպէս արժան է և տես, զի որդիք են ամիրային Ապուսէճայ»։ Էսա և երես ի հոգացողը զնոսա բանդար և ասէ (էջ 76)։

Արնայ ըլլալ յատուկ անուն, բայց կրնայ ըլլալ պաշտօն մը։ Կայ պրս. Ես. bandar որ կը նշանակէ «նաւահանգիստ» յայտնի են օրինակ Պարսկաստանի նշա- նաւոր նաւահանգիստները Պանտարգեազ, Պանտարաբրոս՝ կասպից ծովին և Պարսից ծոցին վրայ։ Ասկէ զատ bandar տաճ- կերէնի մէջ դարձած է «մեծ, նշանաւոր»։ Կ'ըսուի օր. bender şehir dir «մեծ քա- ղաք է»։ Ասկէ է նաև տճկ. sah-bender «հիւպատոս», որ բուն կը նշանակէ «քա- ղաքի մը թագաւորը»։ Կրնայ ըլլալ որ յիշեալ բանդարն ալ վերի ձեռն յառա- ջացած ըլլայ։

7. բաստ

Ապա էր է զի նստիս ընդ դրուց քա- ղաքին. բաստ է. այս քաղաքս քո է և այդ բարձր աշտարակս զի՞ է քեզ. ասա ինձ (էջ 43)։

Արդի Պարսկաստանի մէջ շատ սովո- բական է Ես bast. երբ մէկը կտաժաւ- բութեան կողմէ հալածուած է կամ երբ ժողովուրդը պետութեան դէմ ցոյց կ'ուզէ

սարքել, տունը տեղը կը թողու և կ'ա- պաստանի մզկիթ մը, սրբատեղի մը, փոս- տատունը կամ այլ անբռնարարելի վայր մը և մէկը իրաւունք չունի զանոնք այն տեղէն դուրս հանելու։ Վերի հատուածին մէջ ալ կը թուի թէ շատ բառը այս իմաստով է. բայց կը յարմարի՝ եթէ առ- նենք հարցական. — բանտ է հոս որ նըս- տած ես։

8. զազազիլ

Եւ հայեցեալ ամիրայեան և ասէ զա- զազելով ընդ հնեպն, թէ Ո՞վ է սա (էջ 78)։

Կը գտնուի նաև արդի բարբառներուն մէջ (Երևան, Լոռի, Ղազախ) և կը նշա- նակէ «նեղասրտիլ, զայրանալ, բարկու- թենէն կատարիլ»։

9. գոռոչել

Արտասուեաց և գոռոչեաց և եհարց լալով և ասէ (էջ 54)։

Կը նշանակէ «գոռալ, գոչել» և կազ- մութեամբ ճիշտ այնպէս է՝ ինչպէս հուշել — հատալիլ, թաշիլ—թատաշիլ, շաշիլ—շատաշիլ և մանաւանդ կոշիլ—կոտոշիլ. կայ նաև բառիս զոյականը՝ գոտոշիլ ձևով (Մարթին)։

(Շարունակելի)

Ն. ԱՃԱՌԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

**Հ Ա Յ Ք Ի Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն**

(Շար. տես 1921 թզմ. էջ 144)

Գալով առ Երկրորդ Դարն, տեսանեմք, դարձեալ ըստ վկայարանութեան Եւսե- բիոսի, թէ Պոնտէոս Աղեքսանդրացի իմաս- տասէրն, Աղեքսանդրիոյ Եպիսկոպոս Դե- մետրեայ իրախուսանօք, այցելեց հա- բաւային Հնդկաստան 189 թուականին՝ ուր հանդիպեց Քրիստոնէից և սոցանէ ստանալով օրինակ մի Աւետարանի, ըստ

Մատթէոսի, Եբրայեցիքէն լեզուաւ, տա- բաւ զայն Աղեքսանդրիա որոյ գոյութիւնն Հերոնիմոս ևս վկայէ, յիւրում ժամանակի (չորրորդ դարում) և նաև չէ թողմայ Առաքելութիւնն ի Հնդկաստան համայնա- պէս ընդունման էր։ Նիկիոյ Սուրբ Ժո- ղովոյն (325. Յ. Ք.) բազէազրութեանց մէջ յիշատակուած է թէ Յովհաննէս, Ա-